ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2016 թվականի մարտի 21-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/06)

Պատվիրատուն՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք հասցեում, ստորև ներկայացնում է «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/06)» ծածկագրով հայտարարված ՇՀ ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումները:

Հարցադրում: ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/06) հրավերի տեխնիկական բնութագրում 1-ին չափաբաժնում առկա են անճշտություններ, մասնավորապես՝ բերված են տարբեր հակասառիչ հեղուկների բնութագրեր (առկա են ինչպես մինուս 40°C սառման ջերմաստիճանով, այնպես էլ խտանյութի և մինուս 65°C սառման ջերմաստիճանով հակասառիչ հեղուկի բնութագրեր), ինչպես նաև ջերմաստիճանների նշագրումներում հավանաբար թույլ է տրված մեխանիկական սխալմունք՝ մինուս 350C, մինուս 650C...

Ուստի խնդրում ենք պարզաբանել, թե որ բնութագրով հեղուկն է ենթակա գնման ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից՝ նշելով մատակարարման տարայի ծավալային բնորոշիչը:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 19.03.2016թ.:

Պարզաբանում: Հրավերի 1-ին չափաբաժնով գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրում առկա վրիպակի շտկման նպատակով առաջարկվում է տեխնիկական բնութագիրը հետևյալ խմբագրությամբ՝ «Հակասառիչ խտանյութ և բանող հակասառիչ 40, խտությունը՝ 1,065-ից մինչև 1,1085 գ/սմ3, գույնը կապույտ բյուրեղացման սկզբի ջերմաստիճանը՝ մինուս 40^{0}C-ից ոչ բարձր, ռետինի ուռչումը՝ 5 %-ից ոչ ավելի, ջրածնային ցուցիչը (pH)՝ 7,5-ից մինչև 11,0, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի N 507-Ն որոշմամբ հաստատված «Հակասառիչների և հիդրավլիկ արգելակի հեղուկների տեխնիկական կանոնակարգի»: Փաթեթավորված 4 կամ 5 լիտրանոց տարրաներով:»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Լ.Զոհրաբյանին:

Հեռախոս՝ 011 818-514:

Էլ. փոստ՝ gnumner.mnp@yandex.ru:

Պատվիրատու՝ ՀՀ բնապահպանության նախարարություն: